ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Վանաձոր համայնքի ավագանու 2024 թվականի արտահերթ նիստի՝ կայացած 13.05.2024 թ.

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի պաշտոնակատար, ավագանու անդամ Արկադի Փելեշյանը:

Մասնակցում էին՝

«Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքի ավագանու խմբակցության անդամներ՝

Սեյրան Ղամբարյանը, Գայանե Քալանթարյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության խմբակցության անդամներ՝ Վանիկ Օհանյանը, Լուսինե Թադևոսյանը, Վահագն Մկրտչյանը, Հերմինե Մանուկյանը, Գևորգ Հարությունյանը, Արմեն Հարությունյանը, Նոնա Հովհաննիսյանը, Դավիթ Խաչատրյանը, Էլիզա Մարգարյանը:

«Հայաստանի աշխատավորական սոցիալիստական» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Արման Բերնեցյանը, Աննա Դեմիրխանյանը, Արեն Խաչատրյանը, Հասմիկ Խլոպուզյանը:

«Ապրելու երկիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Լիլիթ Հովսեփյանը:

Նիստից բացակայում էին՝

«Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքի ավագանու խմբակցության անդամներ՝

Մամիկոն Ասլանյանը, Հայկազ Մովսիսյանը, Խորեն Վարդանյանը, Գոռ Բաղյանը, Արթուր Օհանյանը, Կարեն Պառավյանը, Արևհատ Հովհաննիսյանը, Յանա Հովսեփյանը, Անի Մաթևոսյանը, Արման Ափինյանը, Վահագն Դավիթավյանը, Արման Սարգսյանը, Վահագն Ավագյանը:

«Հայրենիք» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Վահե Դոխոյանը, Ժակլին Հեքիմյանը:

«Ապրելու երկիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

Արտավազդ Ալավերդյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու պաշտոնյաներ, ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև ՀԿ-ների ներկայացուցիչներ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Արկադի Փելեշյանը ժամը 12.00-ին նիստը հայտարարեց բացված: Նիստին ներկա էին ավագանու 17 անդամներ:

(Վանաձորի ավագանու 2024 թվականի 13.05.2024 ավագանու արտահերթ նիստի տեսաձայնագրությունն ամբողջությամբ առկա է համայնքապետարանի պաշտոնական կայքում):

Նիստը վարողն տեղեկացրեց՝ որ օրակարգի մեջ տեղի են ունեցել վրիպումներ, որոնք շտկվել են: Այդ պատճառով առաջարկեց սկզբում քվեարկել նախապես ներկայացված օրակարգը, այնուհետև օրակարգի ճիշտ տարբերակը:

Առաջին քվեարկությամբ՝ 17 դեմ ձայնով օրակարգը հաստատելու մասին որոշում չընդունվեց:

Ներկայացվեց ճշտված օրակարգը՝

1. Վանաձոր համայնքի ավագանու 2024թ. մայիսի 13-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ա.Փելեշյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 29 նոյեմբերի 2023 թվականի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ.Վ.Գրիգորյան

3. Վանաձոր համայնքի ավագանու 26 ապրիլի 2023 թվականի թիվ 9 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.Վ.Գրիգորյան

4. Նպատակային նվիրաբերության իրավունքով գույք ընդունելու և «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին

զեկ. Ա.Այվազյան

5. «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակին անշարժ գույքի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին

զեկ. Ա.Այվազյան

6. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, մի շարք հողամասերի նպատակային նշանակությունները փոխելուն համաձայնություն տալու մասին

զեկ. Ս.Աբովյան

7. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս.Աբովյան

8. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ. Ս.Աբովյան

9. Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի տարածքում գտնվող «Սպիտակ ջուր» ջրընդունիչի զբաղեցրած հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին

զեկ. Ս.Աբովյան

10. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատկանող

շինություններին և հողամասերին ընդլայնմանը, ինչպես նաև ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին

զեկ. Ս.Աբովյան

11. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, մի շարք հողամասերի վարձակալության ժամկետը երկարաձգելուն համաձայնություն տալու մասին

զեկ. Ս.Աբովյան

12. Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող 2-րդ փողոցի մի հատվածի անվանումը փոխելու մասին

զեկ. Ս.Աբովյան

13. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակները և դրանցով զբաղեցված հողամասերը ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին

զեկ. Ս.Աբովյան

14. «Լոռու մարզի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին

զեկ. Ս.Աբովյան

15. Վանաձոր համայնքի մի շարք հասցեներում գտնվող քաղաքացիների կողմից սեփականաշնորհված բնակարանի (քոթեջների) զբաղեցրած հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելուն համաձայնություն և բնակելի տները և դրանցով զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը նվիրատվությամբ հանձնելուն համաձայնություն տալու մասին

Քվեարկությամբ, կողմ՝ 17 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

ԸՆԹԱՑՔԸ՝

2 հարց. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 29 նոյեմբերի 2023 թվականի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Գրիգորյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 26 ապրիլի 2023 թվականի թիվ 9 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Գրիգորյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Նպատակային նվիրաբերության իրավունքով գույք ընդունելու և «Վանաձորի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Այվազյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակին անշարժ գույքի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Այվազյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց ընդմիջում՝ 10 րոպե տևողությամբ, ավագանու անդամ Գ. Հարությունյանի ինքնազգացողության վատանալու պատճառով:

Ընդմիջումից հետո նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1 /Ա. Հարությունյան/ ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, մի շարք հողամասերի նպատակային նշանակությունները փոխելուն համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Աբովյանը:

Ավագանու անդամ Գ. Քալանթարյանը խնդրեց մանրամասնել.

Զեկուցողը պարզաբանեց, որ քաղաքաշինության կոմիտեի կողմից դրական եզրակացություն ստացած հողամասերի մասին է խոսքը:

Ավագանու անդամ Ս.Ղամբարյանը առաջարկեց ստեղծել աշխատանքային խումբ, որը կկատարի շրջայցեր, տեղում իրավիճակին ծանոթանալու համար: Առաջարկը ողջունվեց:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Աբովյանը:

Ավագանու անդամ Ն.Հովհաննիսյանը հետաքրքրվեց՝ թե ինչու որոշման նախագծում հասցեները նշված չեն:

Զեկուցողը պարզաբանեց՝ որ գյուղատնտեսական նշանակության հողերի համար ՀՀ Կառավարության սահմանած կարգով հասցեներ չեն տրամադրվում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ձեռնպահ՝ 5 /Է. Մարգարյան, Դ. Խաչատրյան, Գ. Հարությունյան, Ն. Հովհաննիսյան, Հ. Մանուկյան/, ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Աբովյանը:

Ավագանու անդամ Գ. Քալանթարյանը հարցրեց, թե ինչ է ենթադրում արդյունաբերական օբյեկտների հողերը:
Զեկուցողը պարզաբանեց, որ դրանք քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված արդյունաբերական նշանակության հողեր են, օրինակ, քիմ.գործարանի հարակից տարածքը, որը կարող է օգտագործվել միայն արդյունաբերական նշանակությամբ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, ձեռնպահ՝ 17, ընդունվեց որոշում:

9. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի տարածքում գտնվող «Սպիտակ ջուր» ջրընդունիչի զբաղեցրած հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Աբովյանը:

Զեկուցողը մանրամասնեց, թե դա ինչ է իրենից ներկայացնում և ինչու են նվիրում Հայաստանի Հանրապետությանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

10. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատկանող շինություններին և հողամասերին ընդլայնմանը, ինչպես նաև ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Աբովյանը:

Զեկուցողը բոլոր հարցերին տվեց սպառիչ պատասխաններ և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ձեռնպահ՝ 5 /Է. Մարգարյան, Դ. Խաչատրյան, Գ. Հարությունյան, Ն. Հովհաննիսյան, Հ. Մանուկյան/ ընդունվեց որոշում:

11. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, մի շարք հողամասերի վարձակալության ժամկետը երկարաձգելուն համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 16, ձեռնպահ՝ 1/Գ. Քալանթարյան/ընդունվեց որոշում:

12. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնք գյուղ Գուգարքում գտնվող 2-րդ փողոցի մի հատվածի անվանումը փոխելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

13. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակները և դրանցով զբաղեցված հողամասերը ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, ձեռնպահ՝ 5 /Է. Մարգարյան, Դ. Խաչատրյան, Գ. Հարությունյան, Ն. Հովհաննիսյան, Հ. Մանուկյան/ ընդունվեց որոշում:

14. ԼՍԵՑԻՆ- «Լոռու մարզի ձյուդոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

15. ԼՍԵՑԻՆ- Վանաձոր համայնքի մի շարք հասցեներում գտնվող քաղաքացիների կողմից սեփականաշնորհված բնակարանի (քոթեջների) զբաղեցրած հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելուն համաձայնություն և բնակելի տները և դրանցով զբաղեցրած

ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը նվիրատվությամբ հանձնելուն համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Աբովյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին և ներկայացրեց լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ**

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ա.ՓԵԼԵՇՅԱՆ

Ա. ԲԵՐՆԵՑՅԱՆ

Ա. ԴԵՄԻՐԽԱՆՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ. ԽԼՈՊՈՒՋՅԱՆ

Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Ս. ՂԱՄԲԱՐՅԱՆ

Վ. ՕՀԱՆՅԱՆ

Լ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Վ. ՄԿՐՏՉՅԱՆ

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ